

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

1.1. Համախառն ներքին արդյունքի ցուցանիշը

1.1.1. 2004թ. հունվար-հոկտեմբերի ՀՆԱ ցուցանիշը

Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ծավալն ընթացիկ գներով 2004թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 1484381.0 մլն. դրամ և դրա աճի տեմպը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ կազմել է 109.7%՝ 2003թ. հունվար-հոկտեմբերին արձանագրված համապատասխան 115.7% դիմաց:

ՀՆԱ արտադրությունը տնտեսության հիմնական բազային ճյուղերով

(%)

	Աճի տեմպը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատ- վածի նկատմամբ		Նպաստման չափը (տոկոսային կետով) ՀՆԱ-ի հավելածին		ՀՆԱ-ի կառուցվածքը	
	հունվար- հոկտեմբեր				2003	2004
	2003	2004	2003	2004		
<i>ՀՆԱ-ն հիմնական գներով</i>	116.4	110.4	14.9	9.4	90.9	91.5
որից՝						
արդյունաբերություն	122.1	101.7	4.9	0.4	21.3	20.9
գյուղատնտեսություն	100.7	113.8	0.2	2.9	21.3	22.7
շինարարություն	153.4	113.0	6.9	2.1	16.0	15.7
տրանսպորտ և կապ	107.6	117.2	0.4	0.9	5.2	5.3
առևտուր և հանրային սնունդ	114.3	108.8	1.3	0.8	9.7	9.8
<i>Ընդամենը, բազային ճյուղեր</i>	118.6	109.7	13.7	7.1	73.5	74.4
Ընդամենը, այլ ճյուղեր	107.2	113.2	1.2	2.3	17.4	17.1
Ապրանքների (արտադրանքի) գուտ (հանած սուբսիդիաներ) հարկեր	108.6	103.0	0.8	0.3	9.1	8.5
<i>ՀՆԱ-ն շուկայական գներով</i>	115.7	109.7	15.7	9.7	100.0	100.0

Արտադրված ՀՆԱ-ի կառուցվածքը

(ընդամենի նկատմամբ, %)

	Հունվար- հոկտեմբեր	
	2003թ.	2004թ.
<i>Համախառն ներքին արդյունք</i>	100	100
ապրանքներ	58.7	59.5
ծառայություններ	32.2	32.0
ապրանքների (արտադրանքի) գուտ (հանած սուբսիդիաներ) հարկեր	9.1	8.5